բաշինութիւնը։ 1215ին, մեր Ս. Յակոբայ վանքին մէջ ընդօրինակուած է նոյն ճառընտիրը, որ կը գտնուի այժմ Վենետիկի Մխիթարեանց մատենադարանին մէջ (Հին. Թ. 1553), և ցոյց կուտայ մեզի նոյն Դաթիզմայի վանքին հայկական վերահաստատութեան պատմական յիշատակագրութիւններն, որոնց կարևորները նոյնութեամբ կ'ընդօրինակենք հոս. «Յաւի վեցհարիւրորդի վաթսներորդի եւ ի յորրորդում ամի շրջաբերութեան Հայ Տումարի (= 1215). ի թագաւորութեանս Հայոց Լեւոնի, ի վերջացեալ և ի նուաղեալ դառն ժամանակի, յաւուրս աստուածապատիւ և հոգեւոր տեառն Յովհաննիսու Հայոց Կաթողիկոսի, յաշխարհս Պաղեստին՝ ի մէջ գերութեանս Երուսաղէմի, ընդ հովանեաւ Ս. Յակոբայ Առաքելական Աթոռոյս՝ գրեցաւ գիրս գերահրաշ . . . : Արդ՝ ցանկացող եղեալ այսմ գեղեցիկ աստուածային տաճիս, ձգնաւոր ոմն՝ անուն Յովհաննիսու, հանդերձ ֆերբ իւրով կրաւնաւոր կարգաւ, եւ բարի անուն ստացեալ յանձինս՝ իւրեանց ունեցող զվանս արտաքոյ Երուսաղէմի, հանդիպ Սուրբ Սիոնի, ի վերս ճանապարհին Բեթղեհէմի, որ է զեղեալ հանկստարան Սուրբ Աստուածածնին. մինչ գայր յընծայումն ի տաճարն, աստուածացեալ մանկամբն Յիսուսիւ Քրիստոսիւ. վասն այսորիկ բարի անուն եւ ընտրեալ քահանայն Գէորգ կանկնեաց զտաճարն սուրբ եւ անուանեաց յանուն Սուրբ Աստուածածնի, յիշատակ նորա աւրհնութեամբ. նմանապէս եւ եղբարոջի իւր Յովհաննիսու զոր վերագոյն յիշեցաք՝ ընկալաւ զսայ բարեաց յիշատակ և բարեխաւս առ Աստուած՝ իւրեանց և ծնողաց իւրեանց և աւանդեցին ի Սուրբ Աստուածածնին զանձ անկողոպտելի, ի վայելումն շնորհազարդ որդոյ իւրեանց Գրիգորոյ սարկաւագի, եւ այլ կրաւնաւորաց եւ քահանայից։

Արդ աղաչեմք զամենեսեան՝ որք աւկտիք ի սմանէ ընթերցմամբ կամ գաղափար առնելով, սրտի մտաւք յիշատակեսջիք զստացողք սորա զՅովհաննիսու և զքեռ իւր զՏիկներես, և զժառանգաւոր նոցունց Գրիգոր սարկաւագ. և զԳէորգ զգնացեալն առ Քրիստոս, և զվերջին աշխատողս և զգծողս և զկապողս զՅովհան՝ զվերջացեալս յամենայն բարեաց, և խոշորութեանս (գրոյս) անմեղադիր լերուք. և որք աւգնական եղեն ի գին սորին ի կանանց կամ յարանց կամ, ի քահանայից, Քրիստոս Աստուած միոյն ո. ապատ . . .» (Ճոցեալն կը պակէ)։ Յիշատակարանին մէջ յիշատակուած կաթողիկոսն է Մեծաբարոյ Յովհաննէս (1203–1220)։